# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«06» փետրվարի 2018թ. N 06 ք. Ստեփանակերտ

**Արցախի Հանրապետության Գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին**

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 21-րդ հոդվածի 3-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով և ԱՀ Գլխավոր դատախազին թիվ 08 առ 28.01.2009թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողով ստեղծելու մասին» հրամանի համաձայն

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել Արցախի Հանրապետության Գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը հետևյալ կազմով՝

**1) Հանձնաժողովի նախագահ՝**

ԱՀ Գլխավոր դատախազի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական Արամայիս Գալուստի Ավագյան
( Նշանակվել է ԱՀ Գլխավոր դատախազի թիվ 15 առ 29.04.2016թ. հրամանով )

**2) Հանձնաժողովի անդամներ՝**

1) ԱՀ Գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության բաժնի պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական Կարեն Գեորգիի Գաբրիելյան՝ երեք տարի ժամկետով

2) ԱՀ Գլխավոր դատախազության հատուկ քննչական բաժնի պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական Արսեն Գեորգիի Բարսեղյան՝ երեք տարի ժամկետով

3) ԱՀ Գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման բաժնի պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական Լորետա Վազգենի Բարսեղյան՝ երեք տարի ժամկետով

4) ԱՀ Գլխավոր դատախազության կոռուպցիոն, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով բաժնի պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական Արմեն Գալուստի Գալստյան՝ երեք տարի ժամկետով

5) ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Սրբուհի Գրիգորիի Արզումանյան/համաձայնությամբ/ երեք տարի ժամկետով

6) ԱՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ-պետաիրավական վարչության պետ Կարեն Բորիսի Դանիելյան/համաձայնությամբ/ երեք տարի ժամկետով

7) ԱՀ Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ղեկավար Շուշանիկ Լավրենտի Հայրապետյան (նշանակվել է ԱՀ Գլխավոր դատախազի թիվ 41 առ 30.03.2015թ. հրամանով)

8) ԱՀ Նախագահի աշխատակազմի պետաիրավական վարչության իրավաբանական բաժնի վարիչ Վրեժ Արկադիի Ժամհարյան (նշանակվել է ԱՀ Գլխավոր դատախազի թիվ 65 առ 18.12.2015թ. հրամանով)

2. Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության գլխավոր դատախազի 2015 թվականի փետրվարի 06-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 04 հրամանը:

3. Հրամանն ուղարկել ԱՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԱՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ(ներ)ին ու դատախազին, բաժինների պետերին և ԱՀ քաղշրջդատախազներին:

**Արդարադատության երրորդ դասի**
**պետական խորհրդական** **Ա.Ա.Մոսիյան**